

Պատմութիւն Պետրոս առագ զօն-
տուղիս հայոց, ևն երկու ընկերացն
քթոնէնց ղեկորոսին¹, ևն խա-
նէնց ստեփանիս:

Սեղօք Եղեալ Թաղէոսի²,
Քնուամբ եւեթ քահանայի,
Գորով որդի տեր սարգսի,
Եւ ի ցեղէ Համազասպի,
Ըօշ քաղաքաւ ըսպանցի,
Կոչիմ ազգաւ երեւանցի,
Ըստ Հայկազանըս տօմարի,
Հազար Հարիւր տասն եւ եօթի³,
Եւ ի յամեանն յուրիսի,
Քսան եւ չորս օրն ուրբաթի,
Անդէն զործ ինչ ինչ պատահի,
Ի պատճառէ առեւորի.
Ընդ որս եւ ի զվեռնոյ ելի,
Գնալ յերկիրն Հօլանտարայի,
Առ սոս մեծի վարդապետի,
Տեառն սկսանայ մերս Թարգմանչի.
Չոր տեսանելն յոյժ բերկրի,
Ուրախութեամբ զիս ընդունի,
Տալ ինչ բազում գրեանս Հաճի,
Ի վաճառել ըստ նոյն կերպի.

Վարդապետս այս՝ զոր ասացի,
Յալիկուռնա՞ գալ Հանդիպի,
Չի որոնեալ տեղեկացի,
Չբարեպաշտից Թէ գտանիցիս
Առ ի պատճառս օգնականի,
Տպարանին Հայոց ազգի,
Ի կողմանէ փոքր ինչ գրամի,
Վասն տպման աստուածաշնչի,
Ոմանց արանց լեպ առուանի,
Տեղեաւ գորով ճիւղայեցի,
Չորս պատմեաց եմ ի կարգի,
Մինչ ի յաւարտ նոցայն բանի.
Խորհին զխորհորդ յիւրեանց միջի,
Լինել կցորդ տպարանի,
Որ եւ եկեալ ի մի տեղի,
Խօսին ընդ նոյն վարդապետի.
Լինիմք ընկեր զործոյդ մեծի,
Դրամիւք որքան պիտոյսցի,
Տալ իւրաքանչիւր ըստ շափի,
Մինչ գրեանքդ յայ աւարտիցի.
Տուեցելոյ զհաճ գրամի,
Խոստանան տալ էջմիածնի,
Այսու կերպիւ գրեալ լինի,
Ընկերագիր անձանց յասկի.

¹ Այս անձին բուն անունն է Թէոդո-
րոս, ինչպէս Ոսկան իւր Աստուածա-
շնչին յիշատակարանին մէջ կը յիշատակէ:
Յուշարէն Θεόδωρος — Թէոդորոս՝ կը
նշանակէ Առաստաշատուր Թաղէոս Ե-
րեցի ինչպէս պատմութեանս շարունա-
կութեան մէջ պիտի տեսնուի, զԹէո-
դորոս իբրեւ լանիւրաւ... եւ խառնեալ
ի դաս սաղայելի՛ն նկատելով՝ կ'անուանէ
միւս՝ Գեւորոս — ասորոս, ասորոս:
² Բնագիրն ինչպէս որ է կը պահենք,
նոյնպէս կ'իտարարութիւնքն: Միայն տո-
ղերու սկզբան զխալագիրք մեր կողմանէ են:
³ Քրիստոսի Թուականն 1668:
⁴ Լիվոնացի:

Ասեմ երթ գու փութանակի,
Ըսկիզբն արա տպման զբքի,
Մեր կամք պատրաստ վասն գրամի,
Քեզ աւարել ի՛նչ անթերի.
Առ ի ծախս ճանապարհի,
Տան զգրամ՝ ըստ բաւականի,
Ուստի եւ սա ըստ այսմ ուխտի,
Դիմէ յերկիրն Հօլանտարայի.
Ուր տպարանն կայր նախկի,
Յամարտամու՛մ քաղաքի,
Առնէ սկիզբն այնմ տառի,
Որ աստուածաշունչ անուանի¹.

Ի յընկերացն գրամ առաքի,
Բայց ոչ ըստ զործոցն բաւականի,
Վարդապետն Հարկուորի,
Գրել սոցա վասնն գրամի,
Խակ միւր սոցա յոյժ երկրայի,
Վասն առարման իւրեան գրամի,
Առնն ոչինչ պատասխանի,
Եւ չառարկն նմա գրամ մի.
Չորմ եւ սա կարի նեղի,
Վասն ծախսն զործարանի,
Գտեալ զմե իտալացի,
Առնու զգրամ ըստ բաւականի,
Մինչ գրեանն վերջ Հասանի,
Եւ ամենայն զործ կատարի,
Եւ նա մնացեալ անձարելի,
Վասն առն օգնականի.
Եւ իմ Հասեալ յայսմ նուագի,
Յօր վարդապետն կայր տաղնակի,
Ներքոյ պարտուց՝ զոր ասացի,
Չի շէր հընար՝ Թէ անդ վճարի.
Ուստի տալ ինչ կամուորի,
Չբազում գրեանս վասն ծախի,

¹ Այս գաշնագրութիւնը կը յիշատակէ
Ոսկան իւր Աստուածաշնչին (տպեալ
1666—1668) Յիշատակարանին մէջ այս-
պէս... «Ելեալ յերկրէ եւ յաղէիմէ դի-
մեցի ի կողմանս Եւրոպոյ, ... եւ ի դառ-
նալն իմու՛մ անդրէն յիլիօնայ, ... ընդ
երկց Հաւատարմագուռնից վերոգրեցելոց
արանց եւ քրիստոսասիրաց՝ (այսինքն՝
Ստեփանոս, Թէոդորոս եւ Պետրոս Չու-
ղայեցիք) յեւ բազում քննութեանց եւ
Հարցափորձութեանց միարանեցայ սիրով
եւ դաշնագրականաւ գրով, զի սոքա երե-
քեանս ընդ իս Հոգւացն զամենայն զծախ
վերոգրեցելոյ մատենին մինչեւ ցաւարտ,
առ յօդուս ազգիս եւ ի շահ սրբոյ ա-
թոռոյն — Բայց այսպիսի եղև պայ-
մանն, քանզի ի Թուրքի Ուճժի փեար-
վարի ի վերոգրեցեալ պարն Ստեփանոսն,
եւ պարն Պետրոսն խոստացան զաւելեալ
չահն որ ի վաճառմանէ Աստուածաշն-
չոյն լինիցի տալ սուրբ Էջմիածնի, նոյն-
պէս եւ պարն Թէոդորոսն զիւր բաժնի
չահոյ զիւնն խոստացաւ սուրբ Երու-
սաղեմի, եւ զիւնն յուրջ փանց սրբոյն
Սարգսի զօրավարի: Այսու պայմանաւ եւ
եւ չու արարեալ Հասի ի կողմանս Հիւ-
սիսայնոյ յերկիրս Բեւզիկոյ, որ այժմ
ասի Հօլլանտար, ի քաղաքս յԱմսթե-
լտամի... ուրանք եւ սկիզբն արարի
տպել...», եւ ի վերջոյ կը յաւելուի
«Յաւարտ սորին (Աստուածաշնչոյ) ժա-
մանեցաք... ներթուօջն քրիստոսի 1668:»,
Յիշատակարանին Համեմատ Աստու-
ածաշունչը զրոց տպագրութիւնն աւար-
տեալ էր 1668ին՝ երբ Թաղէոս Երեց կը
Հասնի յԱղբերատմ, ինչպէս քիչ մ'եւորք
կ'ըսէ ինքն: Ապա ուրեմն Թաղէի այս
պատմութեան առաջին մասն ըստ ամե-
նայնի միարան է Ոսկանոյ Աստուածա-
շնչոյն յիշատակարանին:

Եւ ըզմանն ինչ՝ պարտուց անտի,
Դընէ վերայ գորոցս այս դամպի¹.
Ատ տար գու փաղափակի,
Եւ վաճառեա ըստ պատշաճի,
Տուր զգամային ըստ օրինի,
Տոկոսեօքն ի՛նչ անթերի,
Եթէ իր ինչ յաւելացի,
Աստ դարձուցես վասն Հարկի,
Չի մի լիցուք ամօթալի,
Առնս այսմիկ փոխառուի.

Ընդ որս եւ զինչս ի նաւ բարձի,
Եւ զօնվօրին² առաքեցի,
Ըզինի եւ ես ելի անտի,
Գայի զերկրաւն ֆոսականայի.
Մինչ էի ես ճանապարհի,
Հասման նաւուցն փութայի,
Համբաւ զործոյս այս Հասանի,
Յունին ընկերացն վարդապետի.
Գրեն զգիր բազմադիմի,
Առ վարդապետն ըստ այսմ կերպի,
Գործըդ այդ մեզ՝ չէ Հաճելի,
Չի տաս զինչս մեր օտարի.
Քանզի մեզ է ընդունելի,
Պարտն Հանդերձ փորձեալ զբարի,
Բայց դու Հոգա յոյժ յըշտայի,
Փոխել ըզգիր փոլիցայի³.
Չի գրեանքս այս ի մեզ տացի,
Մեր տամք զգամային՝ որքան լինի,
Բանըս այս յոյժ պատրաստը լի,
Լինի նմա Հաւատայի,
Հաւատալով նոցայն բանի,
Առնէ զփոխուիլ բոլիցայի,
Եւ առաքէ սուրհանդակի,
Չփոխեցեալ զիրն պօլիցայի.
Սոցա առեալ ուրախալի,
Հանն զգրեանն նաւէ անտի,
Դնեն նազարթիւն⁴ ներքոյ կայի,
Հրամանաւ Արհիւսիլի⁵.

Ի մտանելն փեարվարի,
Եկեալ յերկիրն Թօսկանոց՝ Հասի,
Յալիկուռնա քաղաք մտի,
Բազում մարդիկ ի նա գտի.
Լուսոյ զՏամբաւ այսմ զործի,
Եւ Հիացեալ յայտուչ մնացի,
Չի զկատարածն գիտացի.
Որ եր եղեալ կանաց շարի.
Ոմն զօնուլ⁷ Հայոց ազգի,
Պետրոս աւագ նա յորջորջի,
Նման իժից Թիւնուորի,
Արեանարբու նենգաւորի,
Խակ նա եկեալ ընդ իս խօսի,
Տալով զոչընչն փարելի.

¹ Իտալ. Cambio, փոխանակագիր:
² Իտ. Convoglio, Հին Convoio, խումբ՝
կարաւան նաւուց:
³ Իտ. Polizza (di carieo) Թուղթ,
մարտնակ բեռանց ի նաւի, բեռնագիր զգ.
connaissance.
⁴ Իտ. Lazzaretto (տճ. լազարէթ կամ ումյ.
նազարէթ): (Ժամտախտի պատճառաւ) ար-
դեակը, արդեւանաց տեղ՝ նաւ (+բարն-
իւնն):
⁵ Իտ. Arcivescovo, արքեպիսկոպոս:
⁶ Թոսկանաւ:
⁷ Իտ. Console, Հիւպատոս: Կերեւայ Թէ
Պետրոս Ա. ազեան Պարսից կողմանէ Հիւ-
պատոս էր ի Լիվոնայ: